

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆՅԿԱՅՎԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 5 ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ, 15 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ ԵՎ 24 ԸՆՏՐԱՄԱՐԶՈՒՄ



Հոկտեմբերի 30-ին Վրաստանի 5 ինքնակառավարման քաղաքներում (Թբիլիսի, Բաթումի, Ռուսթավի, Քուբայիսի, Փոթի), 15 մունիցիպալիտետներում եւ 24 ընտրամարզերում կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլ, որի ընթացքում քաղաքացիներն ընտրելու են 20 քաղաքապետների եւ սակրեբուլոյի 42 մեծամասնական պատգամավորների:

Մեծամասնական համակարգով ընտրությունների երկրորդ փուլին մասնակցում են «Վաղաժամկետ ընտրություն-միասնական Վրաստան-ժողովրդավարական շարժում», «Միասնական ազգային շարժում», «Լեյո», «Եվրոպական սոցիալիստներ», «Գախարիա-Յանուն Վրաստանի», «Ազատ Վրաստան», «Թամազ Միչխաուրին միասնական Վրաստանի համար», «Վրացական երազանք», «Ջուրաբ Գիրչի-Ջափարիձե», «Գիրչի-Ավելի շատ ազատություն» ընտրական սուբյեկտները եւ մեկ անկախ պատգամավոր: Ինչ վերաբերում է քաղաքապետների ընտրության

երկրորդ փուլին, ապա այստեղ ներկայացված են «Միասնական ազգային շարժում», «Գախարիա-Յանուն Վրաստանի», «Թամազ Միչխաուրին միասնական Վրաստանի համար» եւ «Վրացական երազանք» ընտրական սուբյեկտների թեկնածուները եւ մեկ անկախ թեկնածու: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 2-ին Վրաստանում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որի ընթացքում քաղաքացիներն ընտրել էին մունիցիպալիտետների 64 քաղաքապետների եւ մունիցիպալիտետների սակրեբուլոյների 1,388 պատգամավորների: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՏՆԵՐՆԵՐ ԴԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 18-19-ին, պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղար Լյուդ Օսթինի ղեկավարությամբ:

Այցի շրջանակներում, ԱՄՆ բարձրաստիճանի ինտերի հետ հանդիպում ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, պաշտպանության նախարար Ջուանչեր Բուրջուլաձեն: Լյուդ Օսթինն այցելեց նաեւ Վրաստանի Հատուկ գործողությունների ուժերի ռազմակայան:

Հանդիպումներին քննարկվեցին Վրաստանի եւ ԱՄՆ-ի համագործակցության հարցերը, գլոբալ անվ-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ» «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրթյանին:



Վետերանների գործերով պետական ծառայության անունից, ցանկանում են իմ շնորհավորանքը հղել Վրաստանի հայալեզու հասարակական-քաղաքական հանրապետական «Վրաստան» թերթի 100-ամյակի առթիվ: Մենք բարձր ենք գնահատում «Վրաստան» թերթի դերը, Վրաստան-Հայաստան միջպետական հարաբերությունների ամրապնդման եւ վրաց ու հայ ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված բարեկամության ամրապնդման գործում: Մեծ է նաեւ թերթի դերն ու նշանակությունը Վրաստանի վետերանների նկատմամբ ցուցաբերած աջակցության ու համագործակցության իրականացման գործում:

«Վրաստան» հասարակական-քաղաքական պարբերականը երկրի հայալեզու բնակչության համար տեղեկատվական նշանակալի աղբյուր է,

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

100-ԱՄՅԱ, ՍԱԿԱՅՆ ՋԱՅԵԼ ՄԵՐ «ՎՐԱՍՏԱՆ»

Լրացավ մեր բոլորի կողմից սիրված ու սպասելի «Վրաստան» թերթի առաջին համարի լույսընծայման 100 տարին եւ անցյալ տարվա դեկտեմբերից, թերթի յուրաքանչյուր համարում հրապարակվում են պարբերականի հոբելյանի շնորհավորական ուղերձները՝ սկսած Վրաստանի եւ Հայաստանի բարձրաստիճանի ղեկավարներից եւ ավարտած շարքային ընթերցողներից:



Ես էլ եմ ցանկանում իմ սրտի խոսքն ուղղել մեր բոլորի կողմից սիրված ու հարգված պարբերականին: Շնորհավորական ուղերձներում շատ ճիշտ են նշել «Վրաստանի» պատմական առաքելությունը՝ իր ընթերցողներին ծանոթացնելով այն նորություններին, որոնք ամեն օր տեղի են ունենում մեր երկրում, ինչ փոփոխություններ են Վրաստանի օրենքներում - էկոնոմիկայի, ֆինանսական,

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ը՝ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՕՐ

ԱՄՍԱԿԱՆ 22 ԼԱՐԻ ԳՈՒՄԱՐԵՆ, ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿՆԵՊԱՊԱՏԿՎԻ

Հոկտեմբերի 17-ին Վրաստանը նշեց Վետերանների օրը: Օրվա կապակցությամբ, Վետերանների հարցերով պետական ծառայության կազմակերպած միջոցառմանը, վետերաններին իրենց շնորհավորական խոսքն ուղղեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, Վետերանների հարցերով պետական ծառայության ղեկավար Կորա Կորալաձեն:

Իր խոսքում, վարչապետը նշեց, որ, երկրի կառավարության որոշմամբ, վետերանների համար ամսական 22 լարի հավելավճարը կվերանայվի եւ հինգ անգամ կավելա-

նա 2022 թվականի հունվարից: - Մեր կառավարությունն ամեն ինչ անում է վետերանների վիճակը բարելավելու համար: Բորանայվի եւ հինգ անգամ կավելա-

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՅՍԿՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՉ ՎՐԱՅԱԼԵՉՈՒ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ԵՎ ՊՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԹԵՍՏԵՐԻ ՄԵՎԱՄԱՆԸ

ԹԹԻԼԻՍԻՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔԿԵՑ ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հոկտեմբերի 21-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի առաջին տեղակալ Էկատերինե Դգբերուաձեն հանդիպում

ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի կրթության, գիտության, (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՅԱՑՎԱԿ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՓՈՒՆՆԱԽԱՐԱՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հոկտեմբերի 21-ին, Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսայիան հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:



Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ օրակարգային հարցերի լայն շրջանակ, անդրադարձ կատարեցին նաեւ մի-

ջազգային կազմակերպություններում Վրաստանի եւ Հայաստանի միջեւ համագործակցության հնարավորություններին:

COVID - 19

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂԵԼԻՉԵ. (ԶԳՈՒՇԱՆԱՆԸ՝ ՍԿՍՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՆԻՔԸ)

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեի խոսքով, Վրաստանում սկսվել է կորոնավիրուսի տարածման 5-րդ ալիքը՝ դեպքերի առավել բարձր ցուցանիշով: Այժմ կարելու է բնակչության ակտիվ պատվաստումը եւ հակահամաճարակային կանոնների պահպանումը:



- Դեպքերի թիվը լրջորեն ավելացել է, սա սկիզբն է, այսպես կոչված, հինգերորդ ալիքի: Ցավոք, այս ալիքը սկսվում է շատ բարձր մակարդակից, ուստի, անհրաժեշտ է, որ բոլորը հաշվի առնեն առաջարկությունները, հոգան իրենց մասին, պահանքներ սոցիալական հեռավորությունը, խուսափեն հանդիպումների վայրերից եւ պատվաստվեն: Ցավոք, բավական բարդ է համաճարակային իրավիճակը՝ վերջին օրերին կորոնավիրուսով վարակման դեպքե-

րի թիվն անցնում է 4000-ը: Այս պահին վարակը երկրի ողջ տարածքում սրընթաց տարածվում է, - հայտարարեց Ամիրան Գամդրելիձեն՝ հավելելով՝ չնայած համաճարակային ծանր իրավիճակին, դպրոցները հեռավար ուսուցման չեն անցնի, եթե ուսուցիչների եւ ծնողների 80 տոկոսը պատվաստվի, ապա՝ դպրոցներում առկա ռեժիմով դասերի անցկացումը վտանգ չի ներկայացնի:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանգությունն ու տարածաշրջանային հարցեր: Այցի ընթացքում Վրաստանի պաշտպանության նախարարության և ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության միջև ստորագրվեց համաձայնագիր, որը նպատակ ունի ամրապնդել Վրաստանի պաշտպանության կողմից իրականացվող ռազմա-առևտրային կապերի ամրապնդումը:

Կողմերն անդրադարձան նաև Հարավային Կովկասում «3+3» ձևաչափի ստեղծելու Ռուսաստանի առաջարկին:

- Ինչ վերաբերում է «3+3» ձևաչափին, ես կասեի, որ Ռուսաստանը պետք է հարգեր 2008-ի հրադարձի համաձայնագրի պայմանները՝ նախքան նոր հարթակների մասին խոսելը,-

ասաց Օսթինը՝ թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Լլոյդ Օսթինը կրկին հավաստեց Վրաստանի պաշտպանության ամրապնդման ուղղությամբ ԱՄՆ պատրաստակամությունը:

- Միացյալ Նահանգները հանձնառու է օգնել Վրաստանին նրա պաշտպանության ամրապնդման և եվրատլանտյան ինտեգրմանն աջակցելու գործում,- հայտարարեց ԱՄՆ պաշտպանության քարտուղարը:

Վրաստանից հետո Օսթինը կայցելի Ուկրաինա և Ռումինիա, իսկ Եվրոպա այցը կավարտի ՆԱՏՕ-ի նախարարական հանդիպմանը մասնակցությամբ, որը տեղի է ունենալու Բրյուսելում:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17 - ԸՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՕՐ

ԱՄՍԱԿԱՆ 22 ԱՐԻԻ ՓՈԽԱՐԵՆ, ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿՆԵՊԱՊԱՏԿՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լոր այն ծրագրերը, որոնք իրականացվել են և կիրականացվեն, լինեն 1000 լարիի հավելումներ, թե վերջերս իրականացվող այլ կարելու ծրագրեր: Իհարկե, մեզ համար շատ կարևոր է հոգ տանել վետերանների, նրանց առողջության մասին: Նաև կցանկանայի ասել, որ մեզ բոլորիս անհանգստացնող խնդիրն այն է, որ ամսական 22-լարի հավելվածները, մեր որոշմամբ, կվերանայվի և հունվարից ամսական հավելումը կաճի հինգ անգամ:

Ձեր գնահատանքը ոչ միայն ձեր վաստակի ճանաչումն է, այլև նտահոգություն մեր ապագա-

յի, ճիշտ արժեքների, հայրենիքի գերակայության և երիտասարդության սերունդների իղեպետների հաստատման համար: Այսպիսով, կառավարության անունից կրկին շնորհակալություն ծառայության համար, մարտում են ձեզ առողջություն, խաղաղություն և բարեկեցություն,- ասաց վարչապետը:

Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու հավաստմամբ, բանակի զննատմամբ է չափվում վետերանների զննահատումը:

- Հարգելի վետերաններ, դուք իրականում մեր հասարակության օրինակն ու մեր հասարակության հենասյունն եք, քանի որ նույնացված եք



ոչ միայն պատմության և անցյալի, այլև ապագայի հետ:

Չկա հասարակություն, որը չի հարգում իր վետերաններին և ունի հզոր բանակ: Բանակի վերաբերմունքը զննատմում է նաև վետերանների կողմից, ոչ միայն այն պատճառով, որ դուք այսօր իրականում մեր

պահուստն եք և այն շատ կարևոր է մեր պաշտպանությունում,- ընդգծեց նախագահը:

Միջոցառմանը վետերանի կարգավիճակ շնորհվեց 28 անձի, այդ թվում՝ ներքին գործերի նախարարության վետերանի կարգավիճակ շնորհվեց գործիչ Իրակլի Գասպարովին:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԸ ԿՐԿԻՆ ՀԱՎԱՍՏԵՑ ԱԿՏԻՎ ԳՈՐԾՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



Հոկտեմբերի 19-20-ին, տարածաշրջանային շրջապայության շջանակներում, Վրաստանում էր գտնվում Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի նորանշանակ հատուկ ներկայացուցիչ խավյեր Կոլոմինան:

Այցի շրջանակներում, Հյուսիսատլանտյան պայմանագրի քարտուղարի ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, խորհրդարանի խոսնակ Կախա Կուճավայի, փոխվարչապետ,

արտաքին գործերի նախարար Դավիթ Չալկալիանու, պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, այցելեց բռնազավթված գիծ և տեղում ծանոթացավ իրավիճակին:

Հանդիպումներում կողմերը քննարկեցին Վրաստան-ՆԱՏՕ գործընկերության խորացման և ընդլայնման հեռանկարները, Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակը: Առանձնակի քննարկվեց ՆԱՏՕ-ի առաջիկա զագաթաժողովի նշանակությունը Վրաստանի դաշինքին ինտեգրման գործընթացում:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՉ ՎՐԱՅԱԼԵՉՈՒ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱԹՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԹԵՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մշակույթի և սպորտի նախարարության պատվիրակության հետ, որը գլխավորում էր փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը: Պատվիրակության կազմում էին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Սիյուռքի բաժնի ղեկավար Կարեն Մնացականյանը, «Կրթական տեխնոլոգիաների» ազգային կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյանը, «Գնահատման և թեստավորման կենտրոնի» ղեկավար Արմեն Հովհաննիսյանը, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի» ծրագրի ղեկավարներ Սաթենիկ Մկրտչյանն ու Արտաշես Թորոսյանը:



Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի ոչ վրացական դպրոցներում հայոց լեզվի և գրականության ուսուցիչների որակավորման բարձրացմանն աջակցության տեսանկյունից ծրագրված քայլերը և կանխագծեցին առաջիկա ամեկնները: Միաժամանակ, կողմերը խոսեցին հայոց լեզվի առարկայական

քննության գնահատման չափորոշիչների և թեստերի մշակմանն աջակցության մասին: Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի պատվիրակության թբիլիսի կատարած աշխատանքային այցի շրջանակներում, Էկատերինե Դգերուձեն և Արթուր Մարտիրոսյանը ստորագրեցին հուշագիր, ըստ որի՝ համագործակցությունը կընդլայնվի մի քանի ուղղությամբ. կողմերը կնպաստեն երկու

երկրների ուսուցիչների վերապատրաստման և գնահատման համակարգերի կատարելագործմանն աջակցելու փորձի փոխանակմանը:


Ինչպես հուշագրի ստորագրումից հետո ասաց Էկատերինե Դգերուձեն, նախատեսված է նաև վրացերեն և հայերեն լեզուների իրավասության գնահատման չափորոշիչների կատարելագործումը, նաև գործող մանկավարժների մասնագիտական զարգացման նպատակով, ինտենսիվորեն անց են կացվում և առաջիկայում էլ կանցկացվեն համապատասխան վարժանքներ:

Իր հերթին, Արթուր Մարտիրոսյանը նշեց, որ նախարարության ենթակայությամբ գործող գնահատման և թեստավորման կենտրոնն աջակցություն կցուցաբերի 100 հարցերից բաղկացած առաջադրանքների բանկի մշակմանը՝ նախատեսված Վրաստանի դպրոցներում աշխատող հայոց լեզվի և գրականության ուսուցիչների մասնագիտա-

կան որակավորման քննության համար:

Աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի կրթության նախարարության պատվիրակությունը, վրաց գործընկերների և Վրաստանում Հայաստանի դեսպանության ուղեկցությամբ, եղավ Թբիլիսիի թիվ 103 հանրային դպրոցում, ծանոթացան դպրոցի հայկական բաժնի գործունեությանը, հետաքրքրվեցին բաժնի աշակերտներին ու ուսուցիչներին հուզող հարցերով և ընթացիկ խնդիրներով:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՌՈՒՍԱՍՏԱՆ - ՆԱՏՕ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՐՑՈՒՄ

Ռուսաստանը դադարեցրեց Մոսկվայում ՆԱՏՕ-ի կապի ռազմական առաքելության գործունեությունը և նոյեմբերի 1-ից հետ է կանչում իր աշխատակիցների հավատարմագրումը: Այս մասին հայտարարեց ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը: ՆԱՏՕ-ն ավելի վաղ հայտարարել էր, որ կրճատել են Ռուսաստանի Դաշնության համար հավատարմագրումների թիվը՝ հասցվելով 10-ի: Միժամանակ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը նշել է, որ ՆԱՏՕ-ն մնում է բաց Ռուսաստանի հետ իմաստալից երկխոսության համար և շարունակում է հանդիպման կոչ անել ՆԱՏՕ-Ռուսաստան խորհրդի շրջանակներում:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՅԻ ԳՈՏՈՒՄ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԳՆԱԸ

Եվրոյի գոտում գնաճը սեպտեմբերին ավելացել է տարեկան հաշվարկով 3,4 տոկոսով՝ ռեկորդ սահմանելով 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պահից ի վեր: Օգոստոսին եվրոգոտում գնաճը կազմել է տարեկան 3 տոկոս, 2020 թվականի սեպտեմբերին ունեցել է 0,3 տոկոս գնանկում: Ինչպես հայտնել է ING բանկի փորձագետ Քոլին Ստոսը, եվրոյի գոտում և եվրամիությունում գնաճի մեծացումը «սպասելի բնույթ է կրում, մասնավորապես, համավարակից տուժած ձեռնարկություններից պետական օգնության զանգվածային տրամադրման և եվրահանձնաժողովի վերականգնման հիմնադրամների գծով օգնության բաշխման կապակցությամբ»:

ԱՄՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻՑ ՄԱՅԱՑԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Կյանքի 85-րդ տարում կորոնավիրուսի հետեւանքներից մահացել է ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար, գեներալ Քոլին Փաուելը: Փաուելը 2001-2005 թվականներին պետքարտուղարի պաշտոնն է զբաղեցրել ԱՄՆ-ի 43-րդ նախագահ Ջորջ Բուշ-Կրտսերի վարչակազմում: 1989-1993 թվականներին Փաուելը եղել է ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի նախագահը: 1987-1989 թվականներին Փաուելն աշխատել է ԱՄՆ-ի 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանի ազգային անվտանգության հարցերով օգնական:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԸ ԽՈՐՅՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՆ ԱՆՑԿԱՑՎԻ»

47 ՏՈԿՈՍԱՆՈՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ՎԵՐՉ ԳՐՎԵՑ ԲՈՒՐ ՀԱՅԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, մեկնաբանելով ընդհանուր կողմից բարձրաձայնած ստվերային կարիքների ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը, հայտարարեց, որ տեղական ինքնակառավարման ընտրությունների առաջին փուլում 47 տոկոսանոց արդյունքը բոլոր շահարկումներին վերջ է տվել:



- Այն, որ 64 քաղաքներից 20-ում կանցկացվի երկրորդ փուլ, բացարձակ նորմալ, եվրոպական պրակտիկա է, ժողովրդավարության ցուցանիշ է, սա մեկ, երկրորդ՝ մենք հավաքեցինք 47 տոկոս, չնայած երկրում ստեղծված բազմաթիվ օբյեկտիվ գործոնների.- հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին՝ հավելելով, որ 47 տոկոսանոց արդյունքով բոլոր շահարկումներին վերջ է տրվել, եւ խորհրդարանական ընտրությունները երկրում չեն անցկացվի մինչեւ 2024 թվականը:

օրոք քաղաքապետները չեն ընտրվել ժողովրդի կողմից, այլ նշանակվել են: Մենք ներդրել եւ հաստատել ենք այս եվրոպական պրակտիկան: Ի դեպ, դա այն ժամանակ ոչ մեկի խնդրանքը չէր, ժողովրդի կողմից քաղաքապետների ուղղակի ընտրությունը մեր նախաձեռնությունն էր: Երկրորդն այն է, որ մենք սահմանել ենք 50 տոկոսի շեմը: Ուստի, սա բացարձակապես նորմալ է, եւ կարծում եմ, որ ոչ ոք չի կասկածում, որ «Վրացական երազանքը» կհաղթի բոլոր 20 քաղաքներում.- ասաց վարչապետը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ


10 ՄԻԼԻՈՆ ԳՈՒՐԻ ՎԱՐԿ՝ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

Ասիական զարգացման բանկը (ADB) եւ ՄՊԸ «Օպտիմա»-ն ստորագրել են 10 մլն դոլարի չափով վարկի պայմանագիր, Վրաստանի մայրաքաղաքում մատչելի եւ կայուն բնակարանաշինության զարգացման նպատակով:

Վարկը կֆինանսավորի ցածր եւ միջին եկամուտ ունեցող մարդկանց համար հաշվառված 3700 մատչելի եւ էներգաարդյունավետ տներից բաղկացած երկու բնակելի համալիրներ: Սա Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում տուն կառուցելու համար մասնավոր հատվածի համար տրված ADB-ի առաջին վարկն է:

Թբիլիսիի տների ավելի քան 80 տոկոսը կառուցվել է խորհրդային Միության ժամանակ կամ դրանից առաջ: Հին բնակելի շենքերում բացակայում են համապատասխան գոտիներ, կայանատեղիներ եւ վերելակներ: Բացի այդ, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց եւ երեխաների հասարակական վայրերի հասա-

մելությունը բարձր մակարդակի վրա չէ: 2019 թվականին քաղաքի կառավարությունը ներկայացրեց մայրաքաղաքում կայուն քաղաքաշինության, տարածքի պլանավորման եւ ներառական ենթակառուցվածքների խթանման ծրագիր: Կառավարությունը նաեւ գեներայի խորհրդատվական դեր է ներդրել քաղաքաշինության եւ բնապահպանական ծառայությունների մեջ քաղաքային բաց տարածքներում քաղաքաշինական նախագծման համար:



ՎՐԱՍԱՆԻ ԽՈՐՅՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԹԵՆՔՈՒՄ

Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի գլխավորությամբ, Աթենքում մասնակցում է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների խորհրդարանների նախագահների համաժողովին:

Համաժողովի շրջանակներում Վրաստանի խորհրդարանի նախագահը հանդիպումներ է անցկացնում միջոցառմանը մասնակից մյուս երկրների պատվիրակությունների հետ:

Մասնավորապես, ծրագրված են Կախա Կուճավայի հանդիպումները համաժողովին մասնակից ավելի քան 10 երկրների խորհրդարանական պատվիրակությունների հետ:

Կախա Կուճավայի խոսքով հանդես կգան նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների խորհրդարանների նախագահների համաժողովին:

500 ԼԱՐԻ ՎԱՌՉԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՅՈՎ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի խոսքով, Թբիլիսիում բնակվող սոցիալապես անապահով թոշակառուները կօգտվեն 500 լարի վաուչերից:

Քաղաքապետի հայտարարությամբ, թոշակառուները կկարողանան օգտագործել այս վաուչերը՝ ընտանեկան բժշկի կողմից նշանակված տարբեր դեղամիջոցներ գնելու համար:

- Թբիլիսիում բնակվող սոցիալապես անապահով թոշակառուներին ցանկանում են նորություն հայտնել, սրանք այն մարդիկ են, ովքեր ամենածանր վիճակում են, ամենաշատ աջակցության կարիք ունեն: Թիմը ներկայացրել է նոր ծրագիր, որը մենք սկսում ենք իրականացնել: 500 լարի վաուչերներ, որպեսզի նրանք ունենան ընտանեկան բժշկի նշանակված տարբեր դեղամիջոցներ, սրտանոթային, ցավազրկող, քրոնիկ հիվանդությունների բուժման եւ այլ դեղամիջոցներ: Այս վաուչերով նրանք կկարողանան ձեռք բերել այն, ինչը կարելու է: Այս ծրագրի իրականացումը Թբիլիսիի բյուջեի համար կարժեքնա 20 մլն լարի: 40 հազար սոցիալապես անապահով թոշակառուներ կօգտվեն ծրագրից, ինչը շատ կարելու է,- ասաց Կախա Կալաձեին:

ՁԵՐԲԱՎԱԿԵԼ ԵՆ ԹՄՐԱՎԱՃԱՆՈՒՆԵՐ

Թբիլիսիում անցկացվեց ենթադրյալ 11 թմրավաճառների ձերբակալության հատուկ գործողություն: Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, բոլոր ձերբակալությունները կատարվել են վերջին տասն օրվա ընթացքում՝ Թբիլիսիի Փոնիճալ արվարձանում: Ձերբակալվածները 20-ից մինչեւ 65 տարեկան են: Նրանք մեղադրվում են թմրամյութերի անօրինական ձեռքբերման, պահպանման ու վաճառքի մեջ: Այդ հանցագործության համար նախատեսվում է 8-ից մինչեւ 20 տարի ժամկետով ազատազրկում կամ անժամկետ կալանք:

Մեղադրյալներից մեկի տանը կատարված խուզարկության ժամանակ իրավապահներն առգրավել են հերոինի երեք փաթեթ եւ առարկաներ, որոնք անհրաժեշտ են թմրամյութերի ծրարաբաշխման համար: Գերատեսչության տեղեկատվությամբ, Թբիլիսիում Փոնիճալի համարվում է «թմրավաճառների որջ»՝ հիմնական ուղին, որի միջոցով երկիր են հասնում վտանգավոր թմրամյութեր:

ԴԱՏԱԿԱՆ

Մ.ՍԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՎՐԱՍԱՆԻ ՍԱՅՄԱՆԸ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 1-ին, թբիլիսյան բնականարներից մեկում, ՆԳ նախարարության աշխատակիցների կողմից ձերբակալվեց Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Ձերբակալման օրվանից Միխեիլ Սաակաշվիլին, ի նշան բողոքի, հայտարարել է հացադդով:

Հոկտեմբերի 20-ին Վրաստանի իշխանությունները, երկրի սահմանն ապօրինի հատելու նոր մեղադրանք են ներկայացրել նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Սաակաշվիլին սեպտեմբերի 28-ին Ուկրաինայի տարածքից Վրաստան է մտել շոգենավով՝ թաքնվելով կաթնամթերք տեղափոխող բեռնատարի մեջ:

ՆԳ նախարարության տեղեկատվությամբ, Միխեիլ Սաակաշվիլու կողմից Վրաստանի պետական սահմանի ապօրինի հատման գործով հետաքննության շրջանակներում, դատավորի որոշման հիման վրա մեղադրյալի տեսքով ձերբակալվել է եւս մեկ անձ: Այսպիսով, այդ գործով ձերբակալվածների թիվը հասավ չորսի:

Ռուսթավի թրեակատարողական հիմնարկում անց է կացվել Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առողջական վիճակի ուսումնասիրության բժշկական կոնսիլիում: Միխեիլ Սաակաշվիլու աճյունային բժշկի Նիկոլոզ Դիպչիձեի հավաստմամբ, Միխեիլ Սաակաշվիլին պատրաստ է տեղափոխվել հիվանդանոց:

- Հոսպիտալացում, չի նշանակում, որ նախագահը դադարեցնում է հացադդովը: Նրա առաջին հայտարարությունը, թե սա հացադդով է, մնում է ուժի մեջ: Ոչ մի կերպ չի խոսվում դադարեցման մասին,- ասաց բժիշկը:

«ԿԱՐԵՎՈՐ ԶԵ, ԹԵ ԻՆՉ Է ԱՍԵԼ ԵՎՐԱՄՈՐՅՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԵՎՈՐՆ ԱՅՆ Է, ԹԵ ԻՆՉ ԿԱՍԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»

Եվրախորհրդարանի մի շարք պատգամավորներ, Միխեիլ Սաակաշվիլու շուտափույթ ազատ արձակման պահանջով, հատուկ ուղերձ են հղել Վրաստանի իշխանություններին:

Մեկնաբանելով Եվրախորհրդարանի պատգամավորների ուղերձը, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ անձամբ իր համար նշանակություն չունի, թե ինչ կասի Եվրապատգամավորը, ամենակարեւորն այն է, թե ինչ կասի մեր ժողովուրդը: Սաակաշվիլին պատասխանատվության է ենթարկվել, նա բազմաթիվ հանցագործություններ է կատարել:

Իրակլի Դարիբաշվիլու խոսքով, մեր երկրում ոչ ոք չի կարող կանգնել օրենքի գերակայության եւ ճշմարտության դեմ:

- Ես ուզում եմ մեր բնակչությանը բացատրել, ենթադրություններ կան, որ Եվրախորհրդարանից ինչ-որ մեկը խելաւմիտ է գործում եւ մեզ իմաստուն խորհուրդներ տալիս: Բոլորին մեկ բան կասեմ, որ այս ցուցակում ես գտել եմ բազմաթիվ վրացական ազգանուններ, չգիտեմ, թե երբ են վրացիները դարձել եվրոպացիներ, բայց ուզում եմ ասել, որ մեր երկրում ոչ ոք չի կարող դեմ լինել օրենքի գերակայությանը: Սաակաշվիլին պատասխանելով, նա բազմաթիվ հանցագործություններ է կատարել, նա բազմաթիվ վրացական ազգանուններ, չգիտեմ, թե երբ են վրացիները դարձել եվրոպացիներ, բայց ուզում եմ ասել, որ մեր երկրում ոչ ոք չի կարող դեմ լինել օրենքի գերակայությանը: Սաակաշվիլին պատասխանելով, նա բազմաթիվ հանցագործություններ է կատարել:

մաթիվ վրացական ազգանուններ, չգիտեմ, թե երբ են վրացիները դարձել եվրոպացիներ, բայց ուզում եմ ասել, որ մեր երկրում ոչ ոք չի կարող դեմ լինել օրենքի գերակայությանը: Սաակաշվիլին պատասխանելով, նա բազմաթիվ հանցագործություններ է կատարել: Սա սահմանում են դատախազությունը, հետաքննությունը եւ դատարանի բոլոր ատյանները, հետեւաբար, ոչ ոք չի կարող դեմ լինել արդարադատության իրականացմանը,- նշեց Իրակլի Դարիբաշվիլին:

ԿԱՌԼ ՀԱՐՑԵԼ. «ՄԵՆՔ ՉԵՏԵՎՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԻՆ»

Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելը հայտարարեց, որ իրենք հետեւում են նախկին նախագահի գործին:

Դեսպանի խոսքով, իրենց ուշադրությունը կենտրոնացած է հիմնարար իրավունքների եւ օրենքի գերակայության վրա, ինչը հիմնարար էլակետ է ԵՄ-ի համար եւ ակնկալվում է, որ

կլինի թափանցիկ ու արդար դատավարություն:

Ինչ վերաբերում է հարցին, թե ինչպես կգնահատի Եվրախորհրդարանի պատգամավորների նամակի վերաբերյալ

Իրակլի Դարիբաշվիլու հայտարարությունը, Կառլ Հարցելը նշեց, որ չի մեկնաբանի նամակը, որը պատգամավորները ստորագրում են անհատապես:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆՅԿԱՅՎԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րին, ընդհանուր առմամբ, մասնակցեց 43 կուսակցություն:

ԿԸՀ-ի տվյալներով, հոկտեմբերի 2-ի տեղական ընտրություններին 64 մուկիցիպալիտետներից 44-ում քաղաքապետի ընտրություններում հաղթել են «Վրացական երազանքի» թեկնածուները: Այս մունի-

ցիպալիտետներում կառավարող կուսակցության թեկնածուները հաղթահարել են 50 տոկոսի շեմը: Քաղաքապետի ընտրությունների առաջին փուլում հաղթողների թվում են Ախալքալաքի մունիցիպալիտետում «Վրացական երազանքի» քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանը եւ Նինոծմինդալի մունիցիպալիտետի քաղա-

քապետի թեկնածու Անիվարդ Մոսոյանը:

Հոկտեմբերի 2-ին Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկությանը մասնակցությունը կազմել է ընտրական իրավունք ունեցողների 51,92 տոկոսը՝ 1,815,776 ընտրող կատարել է քաղաքացիական պարտքը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ ԿԲԱՑԿԵՆ 1830 ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐ



Հոկտեմբերի 30-ին հինգ ինքնակառավարվող քաղաքներում, 15 մունիցիպալիտետում եւ 24 ընտրատարածքում տեղի կունենա ընտրությունների երկրորդ փուլ, քաղաքացիները կընտրեն 20 քաղաքապետի եւ սակրեբուլոյի 42 մեծամասնական անդամի:

Երկրորդ փուլում ընտրողներին կսպասարկեն:

գերատեսչության ընտրողների բազայում, ընտրությունների երկրորդ փուլին մասնակցելու համար, շարժական տուփից օգտվելու նպատակով, պետք է ԿԸՀ-ին դիմեն հոկտեմբերի 23-ից հոկտեմբերի 25-ը՝ զանգահարելով՝ 2 56 00 56 ներքին 0 համարին: Երկրորդ փուլին մասնակցող ընտրական սուբյեկտների իրավասու ներկայացուցիչների համար, լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչեւ երկրորդ փուլի արդյունքների բողոքարկման վերջնաժամկետի ավարտը, գրանցման ժամկետը տարածվում է գրանցված դիտորդների եւ լրատվամիջոցների վրա, որոնք իրավունք ունեն փոփոխություններ կատարել եւ դիտորդներ կամ լրատվամիջոցների ներկայացուցիչներ ավելացնել ոչ ուշ, քան ընտրությունների օրվանից հինգերորդ օրը:

սարկի 1830 ընտրատեղամաս: Նաեւ ստեղծվել են հատուկ տեղամասեր, որոնք ապահովելու են ստացիոնար հաստատություններում եւ մեկուսացման մեջ գտնվող անձանց ընտրությունների մասնակցությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տարածած տեղեկատվության համաձայն, հոկտեմբերի 30-ին, հոկտեմբերի 2-ի նման պաշտպանված կլինեն բոլոր «Կուլիդ» կարգավորումները:

Ինքնամեկուսացման մեջ գտնվող ընտրողները, ովքեր գրանցված են համապատասխան

ԿԻՆՈՑՈՒՑԱԴՐՈՒՄ

«ՖՐՈՒՆԶԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ - ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ՀԻՇՈՒՄ Է ԻՆՁ» ԿՐԱՅ ՌԵԺԻՍՈՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԸ ՃՈՒՑԱԳՐՎԵՑ ԹԲԻԼԻՍԻ ԱՄԵՆԱՄԵՑ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՈՒՄ

Հոկտեմբերի 21-ին հայ մեծանուն դերասան Ֆրունզիկ Մկրտչյանի մասին պատմող «Հնդկաստանը հիշում է ինձ» վավերագրական ֆիլմը ցուցադրվեց Թբիլիսիի ամենամեծ «Ամիրանի» կինոթատրոնում:

Ֆիլմի հեղինակն ու պրոդյուսերը Դավիթ Բեթիտաշվիլին է, ռեժիսորը Օթար Միքելաձեն, օպերատորն ու խմբագիրը Աննա Նիքաբաձեն:

Մինչեւ ֆիլմի ցուցադրումը, ելույթ ունեցավ «Վրաստան-Հնդկաստան մշակութային հարաբերությունների պալատի» նախագահ, կինոնկարի պրոդյուսեր Դավիթ Բեթիտաշվիլին: Նա, մասնավորապես, ասաց.

- Ֆրունզիկին բոլորը հիշում են կատակերգական ֆիլմերից, ինչպիսին է օրինակ՝ «Մինիոնն», բայց նրանք չգիտեն, որ Ֆրունզիկը խաղացել է նաեւ հնդկական ֆիլմերում: Սա վկայում է այն մասին, որ նա հանրաճանաչ դերասան է եղել: Ֆիլմը նկարահանել ենք «Ալի Բաբան եւ 40 ավազակները» եւ «Լեզենդ սիրո մասին» ֆիլմերի հիման վրա: Հատվածներ ենք վերցրել նաեւ «Դերասանների հիշողությունները Ֆրունզիկի մասին» տեսանյութից: Օրինակ՝ Բուբա Կիկաբիձեից, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանից, հնդիկ աստղ Հեմնա Մալեհից, ինչպես նաեւ շատ յուրահատուկ մաս ենք վերցրել Սոփիկո Գիաուրելու հիշողություններից Ֆրունզիկի մա-

սին,- ասաց Դավիթ Բեթիտաշվիլին:

Այս հանդիսատեսի առջեւ ելույթ ունեցան ֆիլմի ռեժիսոր Օթար Միքելաձեն, «Վրաստանի Մահաթմա Գանդիի» հիմնադրամի նախագահ, հրապարակախոս Իրակլի Կակաբաձեն, աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Բուբեն Սադոյանը:

Ֆիլմի ցուցադրմանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի մշակույթի կոմիտեի նախագահ Էլիսո Բոլքվաձեն, Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարասիան, Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ, «Մետեխի» պարիպետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Գելոնդի Փոցիպիշվիլին, կինոռեժիսոր, միջազգային մրցույթների դափնեկիր Թենգիզ Մալախիան, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբությանը, Թբիլիսիի Պետ-



րոս Ադամյանի անվան թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը, Թբիլիսիում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագետներ, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ:

Ֆիլմի պրեմիերան Թբիլիսիում ցուցադրվեց «Վրաստան-Հնդկաստան մշակութային հարաբերությունների պալատի», Վրաստանի «Մահաթմա Գանդիի» հիմնադրամի եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության կազմակերպմամբ:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ ԿԻԵՎՈՒՄ



Հոկտեմբերի 21-ին, Կիևի միջազգային համալսարանում տեղի ունեցավ Խոսե Մաջիների (Գիա Ալվիզե) Փարաջանովին նվիրված «Ջրույցներ Փարաջանովի մասին» հաղորդաշարի՝ «Իրինա Գոգուան Փարաջանովի մասին» վավերագրական ֆիլմի ցուցադրումը: Ընդ որում, ֆիլմի հանդիսատես ուսանողներին տրվեց վավերագրական կինոնկարի գլխավոր հերոսուհու հետ զրուցելու հնարավորություն:

Կիևում թբիլիսյան ճանաչված ռեժիսոր Սերգեյ Փարաջանովին նվիրված վավերագրական ֆիլմերի ցուցադրումը հնարավոր դարձավ նրանից հետո, երբ ընթացիկ տարվա սեպտեմբերի 9-ին «Թբիլիսիում Փարաջանովի թանգարանի» նախաձեռնող խմբի անդամներ, վրաց ճանաչված կինոռեժիսոր Խոսե Մաջիներեն եւ «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբությանը հյուրընկալվե-

ցին Վրաստանում Ուկրաինայի դեսպանությունում եւ դեսպանության խորհրդական Տատյանա Կոլոտիլովայի միջոցով Կիևում գործող Սերգեյ Փարաջանովի թանգարանին փոխանցեցին «Ջրույցներ Փարաջանովի մասին» հաղորդաշարի երեք վավերագրական ֆիլմերը:

Կիևում հանրաճանաչ կինոռեժիսորին նվիրված ֆիլմի ցուցադրումը ակնհայտորեն վկայում է, որ Սերգեյ Փարաջանովի անվան հետ կապված մշակութային տարբեր կենտրոնների միջոցով ծավալվում է սերտ համագործակցություն:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱՋԵ

ԱՄՓՈՓՎԵՅԻՆ ՀԱՄԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԹԲԻԼԻՍԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոկտեմբերի 16-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) ամփոփել է 2021 թվականի հոկտեմբերի 2-ին Թբիլիսիի քաղաքապետի եւ Թբիլիսիի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքները:

ԿԸՀ-ի տարածած հաղորդագրության համաձայն, Թբիլիսիում անցկացված ընտրությունների արդյունքներով, քաղաքային սակրեբուլոյում 40 համամասնական մանդատներից 19-ը բաժին է ընկել «Վրացական երազանքին», 13-ը՝ «Միասնական ազգային շարժմանը», 4-ը՝ «Հանուն Վրաստանի», երկուսը՝ «Լեյո», եւս մեկական մանդատ են ստացել «Գիրչի-Ավելի շատ

ազատություն», «Գիրչի-Չուրաբ Ջափարիձե», «Աննա Դոլիձե-ժողովրդի համար» կուսակցությունները: Ինչ վերաբերում է Թբիլիսիի քաղաքապետի ընտրություններին, ապա հոկտեմբերի 30-ին ընտրությունների երկրորդ փուլում միմյանց կիակարդվեց «Վրացական երազանքի» թեկնածու Կախա Կալաձեն եւ «Միասնական ազգային շարժման» նեկայացուցիչ Նիկա Մելիան:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԿԱԶՄՈՒՄ Է ԿՈԱԼԻՑԻԱ

Վրաստանի ընդդիմությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկրորդ փուլից առաջ որոշել է միավորվել:

Մասնավորապես, հոկտեմբերի 30-ին կայանալիք ընտրություններին, ընդդիմադիր «Միասնական ազգային շարժում» կուսակցության նախագահ, Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու Նիկա Մելիան ընդդիմադիր առանձին գործընկերներից փոխքաղաքապետի թեկնածուներին է առաջադրել, որ, նրա կարծիքով, պատմության մեջ առաջին անգամ Թբիլիսիի տեղական ինքնակառավարման մարմիններում լինի կոալիցիոն թիմ:

Մասնավորապես, փոխքաղաքապետի թեկնածուներ են առաջադրվել Մամուկա Խազարաձեն («Լեյո»), Չուրաբ Ջափարիձեն («Գիրչի»), Էլենե Խոշտարիան («Դրոա»):

Նիկա Մելիայի խոսքով, ընդդիմադիր տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներով կկազմավորվեն նաեւ քաղաքային ժառայությունները:

ԿՐԹԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, 2022 թվականի միասնական ազգային քննությունների դիմորդների համար պարտադիր երրորդ առարկայի ավելի մեծ ընտրություն է առաջարկում:

Այդ մասին ասացին կրթության եւ գիտության փոխնախարար Նունու Միցկելիչը եւ Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգոձեն:

Նրանց խոսքով, 2022 թվականից դիմորդները կկարողանան ընտրել համապատասխան ծրագրի առարկան: Երրորդ պարտադիր ընտրած առարկային, մաթեմատիկային եւ (կամ) պատմությանը կավելանան հետեյալ առարկաները՝ գրականություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, կերպարվեստ եւ կիրառական արվեստ, քաղաքացիական կրթություն:

Ըստ կրթության նախարարության, այս փոփոխությունը, մի կողմից, կբարձրացնի դիմորդների կրթական ծրագրերն ընտրելու ժամանակ առարկաների ընտրության հնարավորությունը եւ կօգնի նրանց ավելի լավ յուրացնել բուհում կրթական ծրագրով տրամադրվող նյութը:

2022 թվականին նախատեսվում է վրացերեն լեզվի եւ գրականության քննության թեստի ձեւաչափի նորոշում: Փոքր փոփոխություն կկիրառվի նաեւ աշխարհագրության քննության դեպքում: